

Երոպական խորհուրդի ընդհանուր քարտուղար Վալթեր Շուիմըրը եւ Երոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Փիլիպ Ժիտերը ողջունած են Հայաստանի մէջ մահապատիժը ջնջելու եւ «Մարդկային իրաւանց եւ հիմնարար պատուիրիւններու երոպական պայմանագիր»ի ծրագրի արձանագրութեան վաւերացումը Հայաստանի Ազգային ժողովի կողմէ: «Այս կարեւոր քայլով շատ աւելի կարելի կը դառնայ Երոպայի տարածքին մահապատիժի ամբողջական ջնջումը, ինչ որ մեր կայմակերպութեան հիմնական խնդիրներէն է: Մենք կը քաջալերենք Հայաստանի իշխանութիւնները՝ շարունակելու իրագործել այն պարտաւորութիւնները, զորս ստանձնած են Երոպական խորհուրդին անդամակցելով», նշուած է յայտարարութեան մէջ:

## ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՐԴԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԻՆ

### ՄԵԿՈՒԿԵՍ ՏԱՐՈՒԱՆ ԸԱՍԱՐ ԱՊԱՇՆՎՈՒԹԵՅԱԲ ԵԼԵԿՏՐՈՆԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԸԱՅԹԱՅԹՈՒՄԸ



Նախարարաց խորհուրդը երէկ Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց արտակարգ նիստ մը, որուն ընթացքին քննարկեց էլեկտրականութեան մարկի տագնապը:

Նախագահ Կոր. Ըմիլ Լախուտի գլխաւորութեամբ եւ վարչապետ Ռաֆիկ Հարիբի ներկայութեամբ գումարուած հինգ ժամ տեւողութեամբ նիստին ընթացքին կառավարութիւնը խաղաղ ու հանդարտօրէն քննարկեց վերոնշեալ հարցերը՝ լսելէ ետք էլեկտրականութեան ընկերութեան տնօրէն Քամալ Հայեքի վեկուցումը:

Որոշուեցաւ, որ էլեկտրականութեան հոսանքին համար հարկ է կազմել Սուրիայէն, սկսեալ յառաջիկայ Ապրիլ 2004էն: Կազմելու խնդիրները իբրեւ առաջին հանգրուան պիտի սկսի Տէր Ամար կայանին եւ ապա՝ ամբողջ Լիբանանի տարածքին գտնուող կայաններուն:

Կառավարութիւնը վերահաստատեց, թէ էլեկտրականութեան հոսանքի գործածութեան սակի գանձումը պէտք է իստի հետապնդուի, ինչպէս նաեւ օրինակացութիւններուն դէմ արշաւը պէտք է շարունակուի:

Կառավարութիւնը վաւերացուց նաեւ էլեկտրականութեան ընկերութեան 300 միլիարդ լ. ոսկիի գումար տրամադրելու առաջարկը՝ վառելիքի հարկ եղած պահեստը ապահովելու համար:

300 միլիարդ լ. ոսկիի գումարը Լիբանանի էլեկտրականութիւն պիտի ապահովէ շուրջ մէկուկէս տարի:

Շար.ը՝ էջ 10

### «11 ՍԵՊՏԵՄԲԵՐ»Ի ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ՊԵՆ ԼԱՏԷՆ ԵՒ ԶԱՌՒԱՀԻՐԻ ԿԸ ՎԵՐԱՅԱՅՏՆՈՒԻՆ...

Այն պահուն էրք աշխարհ կը պատրաստուի զգեկոչելու 11 Սեպտեմբեր 2001ի ահաբեկչութեան զոհերու յիշատակը, Նիւ Եորքի մէջ կատարուած համանուն արարքին պատասխանատուներուն դէմ: «Քայտա» ցանցին ղեկավարը՝ Ուսամա Պըն Լատէն եւ անոր աջ բազուկը՝ նկատուող Այման Չաուսհիրի վերայայտնուեցան «Ժապիրա» պատկերասփիռի կայանէն, որ ցուցադրեց անոնց մէկ նոր վիտէօ - երիզը, որ ըստ մասնագէտներու՝ շատ հաւանաբար անցնող Մալիսի սկիզբը նկարահանուած ըլլայ:



Վիտէօ - երիզին մէջ Պըն Լատէն կ'աղօթէ 11 Սեպտեմբերի ահաբեկիչներուն հոգիին համար, կը փառաբանէ պանոնը, մինչ Չաուսհիրի, որ լեռնային շրջանի մը մէջ կը քալէ Պըն Լատէնի կողքին՝ կոչ կ'ուղղէ աշխարհի բոլոր իսլամներուն, յատկապէս պաղեստինցիներուն եւ իրաքցիներուն՝ յօշոտել ամերիկացի եւ իսրայէլացի բռնագրաւող զինուորները, յանուն «սրբազան պատերազմ»ի, հաւաստելով նաեւ, որ «Միացեալ Նահանգներու դէմ բուն պատերազմը տակաւին նոր պիտի սկսի»:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԅԱՂԹԵՅ ՀԻՍՏՈՒՄԱՅԻՆ ԻՐԼԱՆՏԱՅԻՒՆ 1-0 ԷՁ9

## ՄԱՅՍՈՒՏ ԶԱՅԱՐ ՓՐԿՈՒԹԵՅԱԲ ՄԱՅՍՓՈՐՁԷ

### ԹԷԼ ԱԻԻԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆՁՆԵՑ ՀԱՄԱՍԻ ԶԻՆԵԱԼ ԹԵԻԸ

Համասի գինեալ թեւը՝ «Իզգէտտին Քասսամի Փաղանգներ», ստանձնեց պատասխանատուութիւնը:

Նեցալ երէկ, երբ իսրայէլեան «Էֆ - 16» տիպի պատերազմական օդանաւ մը ուժեղացեալ համարի ղեկավարներէն՝ Մահմուտ Չահարի բնակարանը կազմի իր մայր թաղամասին մէջ: Չահար փրկուեցաւ:

Շար.ը՝ էջ 10



Մահմուտ Չահար՝ հիւանդանոցին մէջ

Թիւրք երկու գործողութիւններուն, որոնք 16 գոհ եւ տաննակներով վիրաւորներ պատճառած էին Երեքշաբթի երեկոյեան: Չահարի շարժումին անուշով հրապարակուած յայտարարութիւն մը կը յայտնէր, որ երկու գործողութիւնները պատճառեցին ուղղուած իսրայէլի, թէ ապահովական ինչ միջոցառումներ ալ որդեգրէ՝ իսլամական շարժումը իր թիրախները պիտի հարձակուի իր ուղղած պահանջներէն վաղից մէջ, ինչպէս որ պատահեցաւ Երեքշաբթի օրը:

«Իզգէտտին Քասսամ»ի յայտարարութիւնը ողջունեց թէ՛ Ալ-Լիբի եւ Երուսաղէմի գործողութիւններուն իբրեւ հակադարձութիւն, իսրայէլի որոշած է թափ տալ Համասի դէմ յայտարարած իր արշաւին: Երկու գործողութիւններուն առաջին հակադարձութիւնը տեղի ունեցաւ:

### ԻՍՐԱՅԷԼ ՊԱՏԵՐԱՁՄ ԅԱՅՏԱՐԱՐԱԾ Ե ԸՍՏԱՍԻ ԴԵՍ

Թէլ Ալ-Լիբի եւ Երուսաղէմի գործողութիւններուն իբրեւ հակադարձութիւն, իսրայէլի որոշած է թափ տալ Համասի դէմ յայտարարած իր արշաւին: Երկու գործողութիւններուն առաջին հակադարձութիւնը տեղի ունեցաւ:

## ԸԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երէկ, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն լիբանանեան մամուլին յղեց հետեւեալ հաղորդագրութիւնը, Պաապտա-Ալէյի խորհրդարանական մասնակի ընտրութեան առիթով:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն իր հերթական նիստին քննարկեց Պաապտա-Ալէյի մէջ Կիրակի, 14 Սեպտեմբերին կայանալիք խորհրդարանական մասնակի ընտրութեան կապուած հարցերը:

Այս շրջագիծին մէջ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կատարեց կացութեան անբողջական եւ առարկայական արժեւորումը՝ մեկնելով թեկնածուներուն ընտրական ծրագիրներէն եւ կարգ մը թեկնածուներու հետ իր ունեցած հանդիպումներէն:

Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէն նաեւ քննարկեց մասնակի ընտրութիւններուն լոյսին տակ ստեղծուած իրավիճակը եւ շեշտեց, որ այս ընտրութիւնը պէտք է շահագործուի քաղաքական նեղ նպատակներու համար՝ ազգային ընդհանուր շահերու հաշուով:

Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէն կարեւորութեամբ կ'ընդգծէ մասնակի ընտրութիւնները ժողովրդավար պայմաններու մէջ կայացնելու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ կենսական կը համարէ, որ բոլորը ցուցաբերեն պատասխանատուութեան բարձր գիտակցութիւն ընտրութիւններուն ընթացքին:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն բոլոր կողմերը կը հրաւիրէ մղելու ընտրական ժողովրդավար ապստեղծութեան ընտրական օրը, որ կը տիրէ պատուաւոր արձակուրդին՝ համայնքային զգայնութիւններէ եւ հրահրումներէ հեռու:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կը հրաւիրէ ընտրաշրջանին մէջ քուէարկելու իրաւունք ունեցող բոլոր լիբանանցիները, որոնք շարքին՝ հայ քաղաքացիները, խիտ շարքերով մասնակցելու ընտրութիւններուն, հաւաստելով, որ իւրաքանչիւր քուէարկող ապստօրէն կը կատարէ ընտրելու իր քաղաքացիական պարտաւորութիւնը:

## ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ

### ԵԱՅԿԻ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՌՈՒՄ ՆԱԽԱԳԱՅԸ ՏԵՍԱԿՑԵՑԱԲ ՆԱԽԱԳԱՅ ԲՈՉԱՐԵԱՆԻ ԵՒ ԱՅԼ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԴԵՏ



Հայաստանի նախագահ Ռոպոէրթ Քոչարեան երէկ ընդունեց Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ԵԱՀԿ Մինսքի խմբակի ռուս նախագահ Եուրի Մերկլիակովը, որ շրջանային այցելութեան մը ծիրէն ներս անցնող քանի մը օրերուն այցելած էր նաեւ Պաքո եւ Ստեփանակերտ:

Հանդիպումին ընթացքին ռուս դիւանագետը նշած է, թէ իր այցելութիւնը կը կրէ անաչնողական բնոյթ եւ կը նպատակադրէ ուղղակիօրէն ծանօթանալ տագնապի կողմերու դիրքորոշումներուն:

Քոչարեան եւ Մերկլիակով քննարկած են ԵԱՀԿ Մինսքի խմբակի ծիրէն ներս Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ներկայ վիճակը եւ վարձագան հնարաւորութիւնները: Մերկլիակովի խնդրանքով նախագահ Քոչարեան մանրամասն ներկայացուցած է տագնապի լուծման առկայութեամբ Երեւանի պաշտօնական մօտեցումները: Քոչարեանի համաձայն, Հայաստան հաւատարիմ է տագնապի խաղաղ լուծման եւ պատրաստ է կառուցողական քննարկումներու եւ բանակցութիւններու:

Մերկլիակով Երեւանի մէջ տեսակցեցաւ նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ: Կողմերը խօսեցան Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման գործընթացի ներկայ փուլին մասին, անդրադարձան Մինսքի խմբակի նախագահներու յաջորդ հանդիպման ու անոնց շրջան այցելութեան հաւանական թուականներուն:

Ռուս դիւանագետը, ընկերակցութեամբ Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Անաթոլի Տրիքովի, հանդիպում ունեցաւ նաեւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի հետ: Յայտարարուեցաւ, որ Սեպտեմբեր 15ին Վիեննայի մէջ պիտի գումարուի ԵԱՀԿ Մինսքի խմբակի նախագահներու հանդիպում մը, որ պիտի քննարկուին տագնապի լուծման նոր առաջարկներ:

Շար.ը՝ էջ 10

### ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՐՁԱՊԵՏ ՄԻՐՈՅԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ՆԱԺԻ ՕԹԱՐԻԻ ԱՌԱՋԱՐԿԵՑ ԿԱԶՄԵԼ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԳՄՄՍՍԿՈՍ, 10 (ԱՅՓ).- Սուրիոյ նախագահ Պաշտպան Սատ ընդունած է վարչապետ Մոհամէտ Մուսթաֆա Միրոյի հրաժարականը եւ խորհրդարանի նախագահ Մոհամէտ Նաժի Օթարիի առաջարկած է նոր կառավարութիւն մը կազմել, հաղորդեց պետական «ՍԱՆԱ» լրատու գործակալութիւնը երէկ:

Սատ հրահանգած է հրաժարել կառավարութեան, որ Գեկտեմբեր 2001ին կազմուած էր, «արագօրէն աւարտելու իր օրակարգին վրայ գտնուող առկա աշխատանքները» մինչեւ նոր կառավարութեան մը կազմութիւնը»:

Միրոյի գլխաւորութեամբ կառավարութեան հրաժարումը կ'ակնկալւի Օգոստոսի սկիզբը կատարած Ասատի այն յայտարարութեանէ ետք, թէ մօտ օրէն նոր կառավարութիւն մը պիտի կազմուի՝ քաղաքական եւ տնտեսական բարեկարգումներուն ընթացքին թափ տալու նպատակով: Լրատու աղբիւրներ եւ խորհրդարանի անդամներ կոչ ուղղած են բարեկարգումներուն թափ տալ, յատկապէս վարչակարգին եւ կեդրոնաձիգ տնտեսութեան մէջ՝ ամերիկեան ուժերու Իրաքի գրաւումէն ի վեր Միջին Արեւելքի մէջ կացութեան փոփոխութեան լոյսին տակ:

Միրո նաեւ քննադատուած էր, որովհետեւ փտածութեան դէմ պայքարի եւ վարչակարգի բարեկարգումին գծով յստակ միջոցառումներ չէ ներկայացուցած:

Սուրիոյ նախագահ Մուսթաֆա Միրոյի հետ սերտ կապեր ունի եւ մէկն է քաղաքական այն դէմքերէն, որոնք նախագահին պահանջով պէտք է առաջնահերթ դիրքի վրայ գտնուին երկրին մէջ փոփոխութիւններ կատարելու համար:

ԸՍՏ ՊԵՐՐԻԻ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԲԻ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԱՏԹԱՐԱՅՄԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերի երեկ ըստ, թե կը նախատեսուի, որ պաղատան հանդիպումները ընթացքին անոր փոխանցած է, թե ամերիկեան վարչակազմն է հիմնական պատասխանատուն Միջին Արևելքի կացութեան վատթարացման, որովհետեւ Ուաշինգթոնը պաղատան հիմնական նախկին վարչապետ Մահմուտ Ապպախի տուած իր խոստումը՝ գաղթականները վերցնելու իմաստով չգործադրեց:

ԶԻՆԵԱԼ ՄԻՋԱԴԵՊ՝ ԹՐԻՓՈԼԻՒ ՍՕՏ

Թրիփոլիի Պատուաւոր շրջանին մէջ երեկ կէսօրէ առաջ արձանագրուեցաւ պինտայ միջադէպ մը՝ ներքին ապահովութեան ուժերու եւ անձնօր կինեային ներքին: Բախումին ընթացքին գործածուեցան զնդացիներն եւ «Ար. Փէ. Փէ.» հրթիռներ: Բախումին ընթացքին վիրաւորուեցաւ պինտային Սմէր Բարիանին, որ անմիջապէս փոխադրուեցաւ Թրիփոլիի մէկ հիւանդանոցը: Բախումը սկսաւ, երբ ներքին ապահովութեան ուժեր պետական կայուններու վրայ կատարուած օրինակաւորութիւն մը պիտի արգիլէին: Օրինակաւոր՝ Հիւսէյն Բարիանի յարձակեցաւ ներքին ապահովութեան ուժերուն վրայ եւ ապա անոր օգնութեան հասան անոր պինտայ ընկերները: Զինեայ բախումին միջամտեց բանակը եւ կացութիւնը առաւ իր հսկակցիին տակ: Միւս կողմէ, բանակի հրամանատարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, նշելով, որ ներքին ապահովութեան ուժերը ձեռքարկած են Հիւսէյն Բարիանին, իսկ բանակը ձեռքարկած է երեք անձեր եւ գրաւած՝ պինտայերը վեցուն ինքնաշարժ մը:

ՄԱՀԱԶԴ

Կեսարիոյ Բարեսիրական Միութեան վարչութիւնը կը գուծէ իր վաստակաշատ անդամներէն՝

ՄԻՇՐԱՆ ՅԱԿՈՒ ՊԱԼԸԸՃԵԱՆԻ (ՏԵՆԱԼ՝ 1947ԻԳ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 9 Սեպտեմբեր 2003ին:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Անի Պալըճեան եւ դստերը՝ Շողիկ եւ Մարիա Տէր եւ տիկին Մինաս Պուտաբեան
Տէր եւ տիկին Փորթ Թորգոմեան
Տիկին Վարդուկ Ճոճեան եւ զաւակները՝ Արամ եւ Ռազմիկ
Տէր եւ տիկին Յակոբ Նազարեան եւ զաւակը՝ Զարեհ
Տէր եւ տիկին Սարգիս Պուտաբեան
Տէր եւ տիկին Թորթ. Արա Թորգոմեան
Տէր եւ տիկին Գրիգոր Նազարեան եւ զաւակուրք
Տէր եւ տիկին Սամուէլ Շահպազեան եւ զաւակուրք եւ համայն ազգականներ կը գուծեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային եւ հարազատին

ՄԻՇՐԱՆ ՅԱԿՈՒ ՊԱԼԸԸՃԵԱՆԻ (ՏԵՆԱԼ՝ 1947ԻԳ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 9 Սեպտեմբեր 2003, կէսօրուան ժամը 12:30ին, արկածի հետեւանքով:

- Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Զորեքշաբթի, 10 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիիսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Տէրն Շրպալէի Ազգային գերեզմանատունը:
• Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
• Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Նաքթաշ, Թալէ՛թ Սրուր, Սիւմա շէնք թիւ 8, Տրոյ յարկ, Հիմզաբթի 11, Ուրբաթ 12 եւ Շաբաթ 13 Սեպտեմբերին:
• Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել բարեսիրական միութիւններու:

ԱՍԻՆ ԵՒ ՓԻԵՆ ԺԵՄԱՅԵԼ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԺՈՍՊԼԱԹԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՊԵՇԻՐ ԺԵՄԱՅԵԼԻ ՇԱՍՅԵԼՆ

Նախկին նախագահ Ամին Ժեմայէլ երեկ այցելեց յոյն ուղղափառ համայնքի Պէյրութի առաջնորդ Էլիաս Աուտէ եպիսկոպոսին, որուն հետ քննարկեց Պապտա-Ալէյի երեսփոխանական մասնակի ընտրութիւնները: Ժեմայէլ յոյս յայտնեց, որ ընտրութիւնները ընթանան ժողովրդավարական մթնոլորտի մէջ եւ բոլոր քաղաքացիները, յատկապէս Պապտա-Ալէյի բնակիչները պէտք է գիտակցին, որ 15 Սեպտեմբեր պիտի ըլլայ նոր օր մը՝ նախկին վերջերը դարձանելու, եւ Լեռնալիբանանի մէջ հաշտութեան եւ համերաշխութեան ընթացքը ամրապնդելու օր մը: Ընտրութիւններուն թեկնածու Հանրի Հըլուի իր զօրակցութեան մասին հարցումի մը պատասխանելով ժեմայէլ ըստ, որ իր միակ փափաքը եղած է հանգուցեալ երեսփոխան Փիեռ Հըլուի մահուան առաջին վայրկեանին իսկ Լեռնալիբանանի մէջ առաջը առնել համայնքային որեւէ տագնապի: Ժեմայէլ ընդգծեց, որ երկրին գերիշխանութիւնը, անկախութիւնը եւ ապառ որոշումի իրաւունքը չեն իրականանար Լեռնալիբանանի մէջ հաշտութեան վերադարձին եւ ընկերային պայմաններու բարելաւման: Անդրադառնալով ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոմայիթի այն յայտարարութեան, թէ աունական շարժումի թեկնածու Հիքմէթ Տիպի յաղթանակին պարագային ինք պիտի դիմէ ընտրաշրջանները ընդարձակելու ընտրանքին, ժեմայէլ ըստ, որ ընտրական օրէնքներու մասին խօսելու տակաւին շատ ծամանակ կայ: Ժեմայէլ մերժեց նաեւ ժոմայիթի կողմէ իր եղբոր՝ հանգուցեալ նախագահ Պեշիր Ժեմայէլի մասին յայտարարութիւնները եւ ըստ, որ Պեշիր Ժեմայէլ ժողովուրդին կողմէ ընտրուեցաւ նախագահ եւ նահատակուեցաւ 10,452 քառ. քիլոմէթրին, այլ խօսքով՝ Լիբանանին սիրոյն եւ աւելցուց, որ հարկ չկայ նշեալ թղթածը՝ արարներուն վերադառնալու: • ԻՐ ԿԱՐԳԻՆ, երեսփոխան Փիեռ Ժեմայէլ երեկ կատարեց յայտարարութիւններ, որոնց մէջ ան մերժեց նահատակ նախագահ Պեշիր Ժեմայէլի հասցէին կատարուած յայտարարութիւնները ժոմայիթի կողմէ: Ժեմայէլ շեշտեց, որ Պեշիրի ազգային խորհրդանիշ է եւ անընդունելի է անոր յիշատակը մասնակից դարձը՝ նել ընտրական նեղ հաշիւներու:

ՀԱՆԳԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԵ ՊԱՏԱՐԱԳ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ԵՒ ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 14 Սեպտեմբեր 2003ին, Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ հանդիսարար Ս. պատարագ պիտի մատուցուի: Պիտի պատարագէ եւ քարոզէ ԳԵՐՃ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 8:00
Պատարագ՝ ժամը 9:30
Քարոզ՝ ժամը 11:00
Մատուցորհներ՝ ժամը 12:00
Ս. պատարագի աւարտին յուշարձան համալիրին առջեւ հողեհանգստեան արարողութիւն եւ մատուցորհներ պիտի կատարուի երեսուամարտին ինկած Գահատակներու հողեհանգստեան համար:
Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդին զաւակները՝ մասնակցելու մեր ազգն ու հաւատը պանծացնող այս տոնակատարութեան:
ԹԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՏԻՈՅ

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՅԵՐՈՍԱՄԱՐՏԻ 88ԱՄԵԱԿ

Հ. Յ. Գ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՈ» ԿՈՄԻՏԵԻ ԴԱՏՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԱՂԱՍԻ (ՊՕՂՈՍ ԹԱՍԼԱՔԵԱՆ)
Արուեստի գործերու ցուցահանդէսին բացումը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 12 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Սարգիս Չէյլեան» ժողովրդային տան մէջ:
Խօսք կ'առնէ ԴՊԿՏ. ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ (ՇԵՐԿԵԼԵԱՆ)
ԾԱՆՕԹ.- Ցուցահանդէսը բաց է մինչեւ Կիրակի, 14 Սեպտեմբեր 2003ի երեկոյեան:

ԾԱԽՈՒ ԸՆԴԱՇԵՐՏ

• Այնճար, գիւղին մէջ, 4000 քառ. մէթր տարածութեամբ, ջրհորով, կոյուղիով եւ թրիֆազէ ելեկտրակայանութեամբ: Դիմել՝ հեռ. 03 - 207772:

ՓԱԹԻԼ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԸՆԴ ՏՈՔԹ. ԱՂԱ ՄԻՆԱՍԵԱՆ ՆՇԱՆՈՒԿ

Շաբաթ, 6 Սեպտեմբեր 2003

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Ելոյթ կ'ունենայ ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ Մասնակցութեամբ
ԽԱԶԻԿ ՄԵԼԽԱՍԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԻՐԻՆ Հիր երգիչ՝ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ
ԾԱՌԱԹ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003, «Նապրի Այնճար» ճաշարանին մէջ: Սակ՝ 35 եւ 40 \$
Տոմսերը ապահովել Սթիտիո Խաչիկ Մալխասեան, «Տիքթէ Եանկ»-էն եւ «Նապրի Այնճար» ճաշարանէն: ԸՆՏ. 08 - 620590, 03 - 790623:

ԱԿՆԱՐԿ

«11 ՍԵՊՏԵՄԲԵՐ»ԷՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՏՔ

Ուղիղ երկու տարի առաջ, 11 Սեպտեմբեր 2001ին, Նիւ Եորքի հռչակաւոր «Թուին Թաուրը»-ը հիմնադրուեցաւ կը դառնար, պատճառելով հազարաւոր պոռթկումներ եւ վիրաւորներ: Օղանաւային աննախընթաց ահաբեկչական արարքը կը ցնցէր ոչ միայն Միացեալ Նահանգները, այլեւ՝ ամբողջ աշխարհը: Եւ այդ օրէն առիթն, «11 Սեպտեմբեր» թուականը ծանօթ է բոլորին ու ձեռով մը հոմանիշ դարձած է ահաբեկչութիւն եզրին:

Ամբողջ աշխարհին հետ, օրին բոլորս խստի դատապարտեցինք արարքը, որ խլեց միայն անմեղ պոռթկումներ: Մինչեւ օրս ու ընդմիջոյ դատապարտելի պիտի մնայ անշուշտ անիկա, ինչպէս նաեւ նմանօրինակ բոլոր արարքները:

Այսօր, սակայն, երկու տարի ետք ի՞նչ բան փոխուած է աշխարհի ընթացքէն, կարելի չէ հաստատ ընել: 11 Սեպտեմբերէն ետք ծաւալած հակահաբեկչական արշար, զոր կը գլխաւորեն Միացեալ Նահանգները եւ որուն կը զօրակցին անխտիր բոլոր պետութիւնները, ի՞նչ արդիւնքի յանգեցաւ: Պատասխանը թէեւ դառն, բայց յստակ է. ոչ մէկ արդիւնքի: Երկրագունդի շրջա ծագեցուն ահաբեկչական բազմաթիւ արարքներ կատարուեցան անցնող երկու տարիներուն ընթացքին ու կը կատարուին մինչեւ օրս, ինչ որ յաւագոյնս կ'ապացուցէ, թէ կարելի չէ եղած արմատախիլ ընել ահաբեկչութիւնը, հակահաբեկչական ու միասնական այն ճիգին, զոր թափեցին ու կը թափեն տակաւին վերոյիշեալ մեծ թէ փոքր պետութիւնները, որոնց շարքին նաեւ Հայաստան եւ Լիբանան:

Բնականաբար, ուրեմն, մարդ անհատը ինքնիրեն թէ բարձրաձայն անխուսափելիօրէն հարց պիտի տայ. ինչո՞ւ:

Անշուշտ դժուար է որոշակի պատասխան մը գտնել նման զգայուն հարցումի մը, որ բնականաբար ունի թաքուն թէ բացայայտ բազմաթիւ ծալքեր, պատճառներ, դրդապատճառներ, այսուհանդերձ կայ տուեալ մը, հիմնական տուեալ մը, զոր պէտք է ընդգծել, այդ ալ երկու չափ - երկու կշիռի սխալ ու անարդար քաղաքականութիւնն է, զոր կը վարեն մեծ պետութիւնները:

Խօսքը կը վերաբերի պետական ահաբեկչութեան: Ահաբեկչութեան դէմ արշար, զոր

կ'ողջունենք անկասկած, թերի ու անիմաստ պիտի ըլլայ եթէ չընդգրկէ նաեւ պետական ահաբեկչութիւնը: Անոր դէմ նոյնքան ծաւալուն արշար կենսական է, այլապէս կարելի պիտի չըլլայ արմատախիլ ընել ահաբեկչութիւնը: Օրինակ, թրքական իշխանութիւններուն վարած քաղաքականութիւնը իր այլախոհներուն կամ քրիւտ ղեկավարութեան դէմ (տակաւին չիտիւնը այս իմաստով հայտնութեան դէմ կիրարկուած Անգայի պատմական կենսափորձին մասին), կամ Իսրայէլի վարած քաղաքականութիւնը ինչ կը վերաբերի պաղեստինցի ղեկավարներու «մաքրագործումին» (բառը կը պատկանի Արիէլ Շարոնին) որոնք համապօր են պետական ահաբեկչութեան, երբ կ'անցնին աննկատ, այլ խօսքով՝ շահադիտական հաշիւներով գիտակցաբար աչք կը փակուին անոնց նկատմամբ, ապա կարելի չ'ըլլայ շեփոխաբերել ահաբեկչութեան դէմ ընդհանուր պայքարը, որքան ալ որ համոզուած ըլլանք անով, որովհետեւ աչք ծակող անարդարութիւն մը, կողմնակալութիւն մը բացայայտ է, իսկ բոլորս գիտենք, որ կարելի չէ յանուն արդարութեան, հաւասարութեան եւ իաղադրութեան պայքար մղել՝ երկու չափ - երկու կշիռի կողմնակալ ու անարդար քաղաքականութեամբ:

Ուստի, կը մնայ, որ աշխարհի մեծ տերութիւնները հրաժարին այդ քաղաքականութենէն, որպէսզի հեղափոխութիւնը իր վերջոյ յաջողի ահաբեկչութեան դէմ համատարած արշար, որ այնքա՞ն կենսական է ու արդար՝ «խաղաղ» երկրագունդ մը ու «արժանապատիւ» կեանք մը ունենալու համար, բան մը, որ իւրաքանչիւր մարդու իրաւունքն է՝ առանց սեղի, կրօնի, ազգութեան ու դասակարգի խտրութեան:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ՏԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԸ՝ ԲՈՒՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԲԳԱՐԵԱՆ, ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ, ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ, ՍՈՒՐԷՆ ԽԱՆԱՍԻՐԵԱՆ, ԱՌԻՔԻՆԵԱՆ ԵՒ «ՅԱՌԱՋ» ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉՆԵՐՈՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ԱՆՎՃԱՐ

### ՏՈՍՍ ՕՂԵՐՈՎ ՎԱՐՉԱՏՐԵՑԷՔ ՉԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Մեր պատկերներում կրթության եւ դաստիարակության մէջ կարեւոր միջոց մըն է վարձատրութեան եւ պատիժի դրութիւնը, որ եթէ ճիշդ ձեւով գործադրուի մեր ծնողներուն եւ ուսուցիչներուն կողմէ, ի վերջոյ հրաշալի արդիւնքներ կու տայ, որովհետեւ ամէնէն յամառ պատկերում աշակերտը անգամ կ'ըմբռնեն, որ իրենց գործը հաստատամիտ է իրենց պատանեկան խորամանկութիւնները լաւապէս հասկցած ծնողքին եւ ուսուցիչին հետ է:

Մենք ենք պատասխանատուներ մեր պատկերներում ապագայ իւրաքանչիւր արարքին, նկատի ունենալով, որ այն տարիներուն, երբ ան չի կրնար առանձին կողմնորոշուիլ, մենք մեր թելադրանքներով եւ միջամտութիւններով վայել կ'ունենանք եւ անոր կ'օգնենք, որ ապագային հաշուոյն դաստիարակի: Այլ խօսքով մենք ենք մեր պատկերներու կերտիչները: Բնականաբար կան արտաքին եւ կողմնակի բազմաթիւ ազդեցութիւններ, որոնք կրնան խանգարել մեր պատկերներու դաստիարակութիւնը: Այսուհանդերձ նման պարագայի միայն մեր հաստատամտութիւնը եւ անվիճողութիւնը կրնան առաջըք առնել անհամ կացութիւններու: Երեխան եւ պատանին տան եւ դպրոցին մէջ պիտի գտնուի, որ իրեն համար հաստատուած են օրէնքներ, որոնցմէ չի կրնար խուսափիլ կամ վանոնք ոտնակոխ ընել: Անգամ մը որ սահկա կը հասկցուի եւ ծնողը-պատկերաբերութիւններուն մէջ սահմանները կը յստականան, երկուստեք հարցերը ակնյայտ կը լուծուին:


Մինչեւ հոս շատ լաւ: Բայց երբ ծնողներ վարձատրութեան եւ պատիժի սկզբունքը սխալ կերպով կը կիրարկեն, ամէն ինչ կը վտանգուի: Հոս կ'արժէ կենդանի օրինակ մը վկայակոչել գաղափարը շօշափելի դարձնելու համար:

Երիտասարդ ծնող մը ուզէր է հայկական վարձարան մը յաճախող իր պատկեր վարձատրել, որովհետեւ 12ամեայ պատանին կրթական լաւ արդիւնքներ արձանագրելու իր խոստումը յարգէր է: Հոս վարձատրութիւնն է տարօրինակը եւ այս մտածումներուն տուն տուող պատճառը: «Տղաս, ըսեր են ծնողները, որովհետեւ յարգեցիր խոստումը եւ լաւ նիշեր ստացար, մենք ալ քեզ կը վարձատրենք» ուզածը կատարելով: Եւ այսպէս օրն իսկ պատանին սկսած է պատիւի ականջին մէկը ծակած եւ օղ մը կախած: Ուրեմն վարձատրութիւնը ականջը ծակելով օղ մը կամ օղակ մը անցընելն է: Վաղը եթէ այս պատանին քիչ մը ակնյայտ արդիւնք ձեռք բերէ, իբրեւ վարձատրութիւն հայրը եւ մայրը կրնան իրենց պատկերն յօնքին ճիշդ վրան արժաթեայ գամ մը խրել, որովհետեւ այդպէս ըրած տղաք եւ աղջիկներ անպակաս չեն մեր շուրջէն եւ պատանին կրնայ այդ ալ ուզել: Ի՞նչ պատահեր է որ, մենք հին գլուխ ծնողներ չենք եւ կրնանք նոյնիսկ մեր պատկերն լեզուէն պանգալ մըն ալ կախել: Մեր պատկերները ոչ մէկ բանով ետ պէտք է մնան այծերէն: Եթէ այս կարծիքներուն վիպէն կը կախեն պանգալները, մենք ալ մեր պատկերներուն լեզուէն կը կախենք պանոնք ու մէկ քայլ առաջ կ'անցնինք այծերէն:

Այս արդիական ծնողքին կատակառդերգութիւնը միայն մէկ օրինակն է մեր շուրջ սովորական երեւոյթ դարձած օղակաւոր պատանիներու եւ երիտասարդներու բանակին, որուն, ըստ երեւոյթին, կը պիտուորագրուին անոնք, որոնք կ'ունենան ուշադրութիւն գրաւելի. սակայն ներքուստ ոչնչութիւն մը ըլլալով՝ իրենց ականջներէն, քիթէն եւ բերնէն օղակներ կախելով՝ կը թափառին մէջտեղերը, որպէսզի մարդիկ վրէժնք դիտեն: Եթէ ուշադրութիւն գրաւելը չէ ստոնց նպատակը, ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ: Այծերո՞ւ նմանիլ: Սակայն անասուններու նմանելու մարդուն փափաքին դարաշրջանը շատ հին է: Չըլլա՞յ հին օրերը կը կրկնուին եւ մենք լուր չունինք:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

### ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԵՆ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԵՆ ՀՐԱԻՌՈՒԱԾ ՓՐՈՖԵՍՍՈՐՆԵՐՈՒ ԶԱՇԿԱՆ ՂԱՍԽՈՍՈՒԹԻՒՆ



Լիբանանահայ Բժշկական Միութեան կազմակերպութեամբ Երէկ, 10 Սեպտեմբեր 2003ին, տեղի ունեցաւ դասախօսութիւն՝ Միութեան արահին մէջ, Մար Միլայի, նիւթ ունենալով հիւանդութիւններու ախտաճանաչման հարցեր: Հիւր դասախօսներն էին Հայկական Ազգային Գիտութիւններու Ակադեմիայի անդամ փրոֆ. Ռոման Աւագեան եւ Մոսկուայի համալր-սարանի փրոֆ. Միլայի Թեփոնէ, որոնք Լիբանան ժամանած էին հրաւերովը Milta Moyen-Orientի (Magnet, Infra Red, Laser and Red Light Therapy):

Տոքթ. Գրիգոր Էճիտեանի բացման խօսքէն ետք խօսք առաւ փրոֆ. Աւագեան. ան ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց ռատիո - աստղագիտութիւնը եւ անդրադարձաւ ռատիո - ջերմաչափի հիմամբ յատկապէս կուրծքի քաղցկեղի ախտաճանաչումներուն մասին:

Այնուհետեւ խօսք առաւ փրոֆ. Միլայի Թեփոնէ, որ խօսեցաւ ախտաճանաչումներու համար արիւստագիտական միջոցառումներու մասին եւ տուաւ համապատասխան բացատրութիւնները:

Նշենք, որ երկու դասախօսներն ալ իրենց նիւթը ներկայացուցին նաեւ սահիկներու ցուցադրութեամբ:

### ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Կ'երգէ սիրուած երգիչ ԳՕԳՕ ԹԻՒԹԻՆՃԵԱՆ, մասնակցութեամբ՝ աւանդական տիոլ գումարային: Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 13 Սեպտեմբեր 2003, Երեկոյեան ժամը 10:00ԷՆ սկսեալ, Սուս Լեռան հերոսամարտի յուշարձանի կողքին:

Ը. Յ. Գ. «ԿԱՐՍԻՐ ԼԵՈ» ԿՈՄԻՏԵԻ  
ՂԱՍԽԱՐԱԿՉԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ

### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ ՎԵՐԱՍՈՒՄ 2003 - 2004 ՏԱՐԵՇՐԱՆԻ

Սկսած են նախկին եւ նորեկ աշակերտներու արձանագրութիւնները՝ բոլոր դասարաններուն համար, շաբաթան բոլոր օրերը (բացի Ծաբաթ եւ Կիրակի օրերէն), առաւօտեան ժամը 9:00ԷՆ 1:00, կէսօրը ետք ժամը 5:00ԷՆ 8:00: Սուտքի քննութիւնները՝ Ընթացքի, 18 Սեպտեմբերին, առտուան ժամը 8:00ին: Դասերու սկիզբ Միջնակարգ եւ երկրորդական 24 Սեպտեմբեր 2003 Նախակրթարան 29 Սեպտեմբեր 2003 Մանկամտուր եւ մանկապարտէզ 6 Շոկտեմբեր 2003 Ընթացք՝ Հայ Կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարան, Պուրճ Համուտ, Արաքս փողոց, հեռ. 260504: E-mail: administration@mesrobian.com

ՏՍՕՐԵՆՈՒԹԻՒՆ

### Ս. ԽԱՉԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ



ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ  
Կ'երգէ  
ՃՕ ԱԹԱՔԵԱՆ

Ընկերակցութեամբ՝ ԻՐ ՆՈՒՎԱԳԱՆՈՒՄԻՆ

- Ճոխ յայտագիր եւ անկակալներ
- Բաց աղանդեր, բաց խմիչք՝ օղի եւ ուիսքի

Ծաբաթ, 13 Սեպտեմբեր 2003, Երեկոյեան ժամը 9:30ԷՆ սկսեալ, Ճաշարան «OLYMPIC»-ի մէջ, Այնճարի մուտքին: ՍԱԿ՝ 25.000 լ. ը. Սեղանները ապահովելու համար դիմել՝ հեռ. 03-854796:

### السفير السفير السفير السفير السفير

20րէքշաբթի, 10 Սեպտեմբերին լոյս տեսած լիբանանեան օրաթերթերուն գլխաւոր նիւթերուն շարքին կը կարդանք լուրեր եւ վերլուծական յօդուածներ, որոնք կը վերաբերին Ալէյի երեսփոխանական մասնաժողովի ընտրութիւններուն կապակցութեամբ երեսփոխան Ռաւիտ ժողովի անուանումը: «Մատինս» դրամատան հարցին եւ երեսփոխանութեան թղթածրարի ընտրութեան մասին: «Մատինս» դրամատան հարցին եւ երեսփոխանութեան թղթածրարի ընտրութեան մասին: «Մատինս» դրամատան հարցին եւ երեսփոխանութեան թղթածրարի ընտրութեան մասին:

Կատարուի դէպի անցաւ եւ Սուրիոյ հետ դաշինքը չեղեալ նկատուի: Երեսփոխան Ռաւիտ ժողովի մասին «Մատինս» գրած էր, որ ժողովը այս ձեւով անուանուի ընտրութեան ժամանակ: «Մատինս» դրամատան հարցին եւ երեսփոխանութեան թղթածրարի ընտրութեան մասին: «Մատինս» դրամատան հարցին եւ երեսփոխանութեան թղթածրարի ընտրութեան մասին: «Մատինս» դրամատան հարցին եւ երեսփոխանութեան թղթածրարի ընտրութեան մասին:

Լիբանանեան մամուլը նաեւ բաւական ընդարձակ տեղ տուած էր Երուսաղէմի եւ Թէլ Աւիւի մէջ տեղի ունեցած անձնասպանական գործողութիւններուն, Արաքսկան Լիկային մէջ Իրաքի դերին վերաբերող լուրերուն, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի Հնդկաստան կիրարկումը, եւ թող թուական համեմատութիւնը իշխէ: Երեսփոխան Նասէր Քանտիլ իր վարձարանը կ'արտայայտէ «բաժանումի ջրաղացին մէջ ձեռք բափել» ու երեսփոխանութեան գծով:

### ՊԱՏՊԱՏԱՅԻՆ ԸՆԴՐԱՊԱՅՐՄԱՆ ՀԵՏՉՆԵՄ ԿԸ ՍԱՍԿԱՆԱՅ

Տրուած ըլլալով որ այս օրերուն երկիրը տագնապեցնող ընկերային-տնտեսական թղթածրարներուն կողքին նոյնքան կարեւորութիւն ստացած է Պապատ-Ալէյ ընտրատարածքին մէջ այս կիրակի տեղի ունեցած անձնասպանական մամուլը ականջալուր կը մնայ այս ընտրութիւններուն առնչուող իրաքանչիւր մանրամասնութեան:

Բնականաբար, լիբանանեան մամուլը չէր կրնար չանդրադարձաւ ընտրապայքարի սաստկացման երեւոյթին, որուն «նպատակ» երեսփոխան եւ Ընկերվար-Յանաքի մական կուսակցութեան պետ Ռաւիտ ժողովի անուանումը: Ըստ «Նահար» օրաթերթին, երեսփոխան ժողովը իր մամուլի ասուլիսին ընթացքին յարձակողական կեցուածք որդեգրած է Վոր. Միշէլ Աունի դէմ, իսկ միւս կողմէ քրիստոնէական այլ ընդդիմադիր ուժեր սիրաշահելով՝ անոնց կոչ ուղղած է մասնակցելու ընտրութիւններուն:

«Տիար» մէքթերած է մամուլի ասուլիսին ընթացքին հնչուած ժողովի յայտարարութիւններէն մէկը, որուն համաձայն՝ Վոր. Միշէլ Աուն շրջանին մէջ կիրքեր կը հրահրէ: Միշէլ Աուն կապ հաստատելով «Տիար»-ի իր մարտաքննութեան հետ հարց տուած է, թէ արդեօք ժողովը կը հաւատա՞յ համակերպութեան գաղափարին: «Նատիւ ժողովը Աունի փոխանորդն է. անոր խօսակցութիւնը ինձի կը յիշեցնէ իր հայրը: Թոյլ պիտի չտանք, որ ետդարձ մը

կան նոր գործողութիւններու: Լիբանանեան մամուլին «Մաֆիր» նկատուած էր, որ Համաս շարժումը այս ձեւով կը վերստանան նախաձեռնութիւնը եւ կը սկսի պատասխանել Վիշէլի յարցումին: «Մաֆիր» կ'աւելցնէ, որ տեղի ունեցած անձնասպանական երկու գործողութիւնները իսրայէլացի 75 զոհ եւ վիրաւոր:

«Տիար» նշած էր, որ Համաս հարուածեց Թէլ Աւիւի եւ Երուսաղէմի սիրտը՝ իբրեւ պատասխան իր ղեկավարներուն սպանութեան: «Նահար» իր կարգին գրած էր, որ այս երկու գործողութիւններուն պատճառով Իսրայէլի մէջ ձայներ սկսած են պահանջել Արաքսի հաշտութեան յարաբերութիւնը: «Նահար» նաեւ անդրադարձած էր Իսրայէլի վարչապետ Շարոնի Հնդկաստան այցելութեան: Թերթը գրած էր, որ բողոքի միջոցով Իսրայէլի քաղաքացիները անհանգստացած են Իսրայէլի վարչապետ Շարոնի Հնդկաստան այցելութեան: Թերթը գրած էր, որ բողոքի միջոցով Իսրայէլի քաղաքացիները անհանգստացած են Իսրայէլի վարչապետ Շարոնի Հնդկաստան այցելութեան:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՅԼ ԻՐԱՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մատինս» դրամատան հարցով Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ «Նահար»-ի յայտնած է, որ հարցին քննութիւնը Կեդրոնական Դրամատան վերադարձնելը չի դադարեցնէր երկիրը ցնցած հարցին պատասխանատուներուն հետ տարաբանութիւնը: Թերթը նշած էր, որ կարգ մը աղբիւրներ կը խօսին «Մատինս» դրամատան հարցին հետ կապ ունեցող քաղաքական օղակներու մասին:

Նախագահ Էմիլ Լահուտ նոյն հարցով «Մաֆիր»-ին քսած է, որ Կեդրոնական Դրամատան վերջին պէտք է ժողովուրդին բացայայտ «Մատինս» դրամատան գաղտնիքները: Կառավարութիւնը կը հարցապնդէ երկրորդականութեան ընկերութիւնը այս թղթածրարին կապակցութեամբ:

«Տիար» օրաթերթը բաւական մեծ տեղ տուած էր «Կրիսի Պիչ» պանդոկին մէջ երկրորդական պարտիի վեղծումներու հարցով նախկին երեսփոխան Ռաւիտ խապէսի դատական հետապնդման: Ըստ թերթին, դատախազ Համուշ հարցապնդած է խապէսի իր բնակավայրին մէջ, իսկ ապահովական ուժերէն ջոկատ մը շրջապատած է բնակավայրը:

### ԱՆՉԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Լիբանանեան բոլոր թերթերն ալ յատուկ կարեւորութեամբ մօտեցած էին գրաւեալ «Պաղեստինի մէջ իսրայէլեան կառավարութեան դէմ կատարուող անձնասպանա-

### ԻՐԱԲԻ ԱՌՃԱՄԵՆՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԱՔԱԿԱՆ ԼԻԿԱՆ

«Տիար» գրած էր, որ Արաքսկան Լիկան հաւանութիւն տուաւ, որ իր մէջ «ժամանակակիցութեամբ» Իրաքի ներկայացուցիչ Իրաքի ժամանակակից խորհուրդը: Լիկան խորհուրդին պահանջած է, որ վերջինս աշխատի Իրաքի ստոր ուժերուն հետեցման վրայ: Անդրադառնալով ներկայիս Իրաքի մէջ տիրող պինդութեան կացութեան դիմադրութեան վերջին գործողութիւնները, որ զի-մադրութեան յարձակումներուն պատճառով Լիկան խորհուրդը: Լիկան խորհուրդին պահանջած է, որ վերջինս աշխատի Իրաքի ստոր ուժերուն հետեցման վրայ: Անդրադառնալով ներկայիս Իրաքի մէջ տիրող պինդութեան կացութեան դիմադրութեան վերջին գործողութիւնները, որ զի-մադրութեան յարձակումներուն պատճառով Լիկան խորհուրդը: Լիկան խորհուրդին պահանջած է, որ վերջինս աշխատի Իրաքի ստոր ուժերուն հետեցման վրայ:

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն 8:45.- «Աստղեր» 9:40.- «Առաւօտեան տոն» 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն 3:00.- Արաքսկան յայտագիր. հարցազրոյց Ելեւմուտքի նախարար Թոքթ. Շարոնի հետ. կանոնադրութեան յարցերը: Երեսփոխան Նասէր Քանտիլի հետ. կանոնադրութեան յարցերը: Երեսփոխան Նասէր Քանտիլի հետ. կանոնադրութեան յարցերը: Երեսփոխան Նասէր Քանտիլի հետ. կանոնադրութեան յարցերը: Երեսփոխան Նասէր Քանտիլի հետ. կանոնադրութեան յարցերը:

Հ. Յ. Գ. «ԿԱՐՍԻՐ ԼԵՈ» ԿՈՄԻՏԵԻ  
ԴԱՍԽԱՐԱԿՉԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ  
ՄԵԾԱՐԱՆԵԻ ԵՐԵԿՈՅ  
Սուսալեռնի ակաճաւոր գրազեւ-քննադատ  
ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ  
գրական գործունէութեան 50ամեակի առիթով:  
Խօսք կ'առնեն՝  
ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ  
ԵՒ ՅԱԿՈԲ ՀԱՒԱԹԵԱՆ  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 12 Սեպտեմբեր 2003, Երեկոյեան ժամը 8:30ին, «Գալուստ Կիւլպեմեան» սրահին մէջ:

ՀԱԶԱՐ ՏԱՌԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ ԸՅԵ

1

ԱՂՕԹՔ ՄՐՏԻ ԽՈՐԵՐԷՆ

Հայ ժողովուրդի գաւակները հազար տարիէ ի վեր կ'աղօթեն Սուրբ Գրիգոր Նարեկացիի բառերով: Իւրաքանչիւր հաւատացեալ, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Խորանին առջեւ կ'ամփոփուի, խոստովանանքի կը պատրաստուի, ու Սուրբ Հաղորդութիւն կը ստանայ, հազար տարուան ժամանակամիջոցի մը վրայէն ուստով մը ընելով կը կապուի այն մեծ Սուրբին, որ Նարեկի վանքէն դէպի երկինք բարձրացուց հայ հաւատացեալ մարդուն շերմեռանդ աղօթքները: Նարեկացիին շնորհիւ, սորվեցանք Աստուծոյ հետ խօսիլ մեր սրտի խորերէն: Նարեկացիին շնորհիւ իմացանք, որ Աստուծոյ հետ կրնանք խօսիլ գեղարուեստական լեզուով ու բառերու գեղեցկութեամբ: Նարեկացիին շնորհիւ լսեցինք թէ որքան գեղեցիկ ու ազդու որակականքն կրնայինք գտնել Աստուծոյ մասին: Գիտցանք նաև որ գիտակից մարդուն համար երջանկութիւն էր համեստօրէն անդրադառնալ իր սեփական մեղքերուն եւ անոնց ծանրութեանէն փրկուիլ սրտաբացօրէն խոստովանելով զանոնք: Բայց ամէնէն կարեւորը այդ չէր: Ամէնէն կարեւորն այն էր, որ մենք, Նարեկացիին շնորհիւ անդրադարձանք, թէ մենք պատասխանատու կը նկատուինք ոչ թէ միայն մեր սեփական մեղքերէն, այլ նաեւ համայն մարդկութեան մեղքերէն:

Նարեկացիին անմահ դէմք մըն է հայ հոգեւոր ու գրական կենսաբանը: Աստղ մըն է, որ հազար տարիէ ի վեր կը փայլի հայ ժողովուրդին հոգեւոր երկնակամարին վրայ, եւ որ կրնայ ուղի ցոյց տալ բոլոր անոնց, որոնք տակաւին հաւատարիմ կը մնան մեր պապերէն մեզի ծառանգուած սրբութիւններուն: Հուր տեղ չէ որ հայ մամուլը հազար տարիէ ի վեր իր երդիքին ու անկողնոյ բարձին տակ գուրգուրանքով կը պահէ Նարեկի աղօթագիրքը եւ զուր տեղ չէ, որ հայ մամուլը կը հաւատայ այդ աղօթագիրքին բուժիչ յատ-

կութիւններուն: Հայ մամուլը գիտէ որ Տէրը սիրեց իր այդ հաւատարիմ ու սրբակենցաղ գաւակը, Գրիգոր Նարեկացիին, որուն շնորհեց մտքի ու երեւակայութեան բարձրաթոյշ խոյանք համեստութեանէ ձեռնդ առած զգլխիչ մեծութիւն, հոգեկան անսպառ կորով, որպէսզի ան բարոյախօսէ իր նմաններուն համար եւ որպէսզի ան իր ժողովուրդին սորվեցնէ աղօթքներուն ամէնէն գեղեցիկներն ու ներշնչողները: Տէրը լսեց Սուրբին աղօթքը ու անոր շնորհեց այն ոսկեայ գրիչը, որով գրուեցաւ «Մատեան Ողբերգութեանը», որ վերջին հաշուով դարձաւ «Մատեան Հոգեկան Երջանկութեան Ու Անդորրութեան»:

Նարեկացիին նուիրուած այս համեստ գիրքն ալ գրուեցաւ ի խորոց սրտի, ուրախութեամբ, հոգեկան բաւարարութեամբ, գեղեցիկիւն մէջէն ստացուած միխթարութեամբ: Ու գեցիկնք, որ մեր սիրելի ժողովուրդը քիչ մը աւելի մօտէն ճանչնայ Նարեկացիին բազմաճանաչ յատկութիւնները, եւ մենք ալ, Նարեկացիին հազարամեակին առթիւ, մեր սրտի ու խղճի պարտը վճարենք այս մեծ աղօթարարին:

Գիրքը գրելու ընթացքին, օգտագործեցիմք Վագրէն Գեորգեանի Արեւելահայերէն Քարգմանութեամբ 1994ին երեւանի մէջ հրատարակուած գիրքը, ուրկէ մենք ալ Արեւմտահայերէնի վերածեցիմք գործածուած մէջբերումները:

Նարեկացիին աղօթքները պիտի շարունակեն մեր սիրտերը լեցնել եւ հոնկէ ալ դէպի երկինք բարձրանալ, որքան առեւ որ մենք մեր սիրտերը բաց պիտի պահենք այս մեծ Սուրբէն մեր մայրենիով մեզի հասնող ամենաքաղցր հնչիւններուն: Եւ գիտենք որ մեր այդ աղօթքները հաճոյ պիտի բուին Աստուծոյ, քանի որ անվերապահօրէն կը հաւատանք, որ մեր լեզուն Աստուծոյ ամենասիրած լեզուն է:

Ռ. Հ.

Հայ ժողովուրդը հազար տարիէ ի վեր կ'աղօթէ Նարեկացիին հետ: Հազար տարիէ ի վեր Նարեկացիին բանաստեղծաշունչ լեզուով կը խօսի Աստուծոյ հետ: Նարեկացիին աղօթք դարձած է Հայ ժողովուրդին լեզուին վրայ: Նաեւ խունկ, որ կը բարձրանայ դէպի երկինք: Խոստովանութիւն, որ կը կատարուի սրտի խորերէն:

Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան»ը հրաշք մըն է իր տեսակին մէջ եւ մէկն է այն հրաշքներէն, որոնց նման մէկ անգամ միայն կը պատահի: Հայ ժողովուրդը, ասկէ վերջ եթէ հազար տարի ալ սպասէ, երկրորդ Նարեկացի մը պիտի չկարենայ ունենայ եւ ասկէ հազար տարի վերջ ալ հաւատացեալը Նարեկացիի բառերն ու բանաստեղծութիւնը փոխ պիտի առնէ, եթէ ուզէ Աստուծոյ խօսք ուղղել իր սրտի խորերէն:

«Ի խորոց սրտի՛ խօսք Աստուծոյ հետ»: Գրաբարէն աշխարհաբարի վերածուած այս նախադասութիւնն է որ հարիւրաւոր գլուխներ կը բանայ «Մատեան Ողբերգութիւն» կոչուած գիրքին մէջ: Այդ հարիւրաւոր գլուխները բանաստեղծ Նարեկացիին իրենց հետ կը տանին Աստուծոյ ուղղեալ մենախօսութեան մը հրաշալի ոլորտներուն մէջէն: Իսկապէս սրտի խորերէն արտասանուած խօսքեր են ասոնք:

Սրտի խորերէն արտասանուած խօսքեր, որոնք սակայն ուրիշ ոչինչ են եթէ ոչ մեղքերու կամ յանցանքներու խոստովանութիւն, Աստուծոյ փառաբանում, Աստուծոյ ներողամտութիւնն ու ողորմութիւնը խնդրելու պաղատանք: Ընթերցողը կրնայ զարմանալ թէ Նարեկացիին մտածումի ու բանաստեղծական երկունքի որքան հանձնարեղ զիւտեր կ'ընէ սրտի խորերէն արձակուած այդ խօսքերը դէպի երկինք ուղարկելու ընթացքին: Ամէն անգամ որ էջ մը պիտի դարձնէք, կամ նոր գլուխ մը պիտի բանաք Մատեանին մէջ, պիտի տեսնէք որ Նարեկացիին նոր ներշնչումէ մը տարած է: Գրականութեան պատմութեան մէջ չկայ այսքան երկարաշունչ ուրիշ գիրք մըն ալ ուր բանաստեղծը շարունակ ինքզինք կրկնելու տպաւորութիւնը թողնելով հանդերձ, այսքան նորութիւններ հրամցուցած ըլլայ: Բոլոր այս գիւտերը պիտի դառնան երկու գլխաւոր բեւեռներու շուրջ: Առաջին բեւեռը բանաստեղծին աւաւոր ու գետնաբար մեղաւորութիւնն է: Երկրորդը՝ Աստուծոյ փառաւոր ու ճանաչագեղ մեծութիւնն է: Ամբողջ Մատեանը կ'երթայ առաջինն դէպի երկրորդը: Եւ շմեցուցիչ է տեսնել, թէ Նարեկացիին ինչպիսի բառերու, պատկերներու, հանգիտութիւններու կը դիմէ խոստովանելու համար իր մեղաւորութիւնը: Եւ նոյնքան շմեցուցիչ է տեսնել թէ ան ինչպիսի բառերու, պատկերներու, գիւտերու ու հանգիտութիւններու կը դիմէ փառաւորելու համար Աստուծոյ պայծառ դէմքը: Մէկէն դէպի միւսը երկարող այս գծին վրայ Նարեկացիին ներշնչումը անսպառ է: Այնքան անսպառ է եւ իւրաքանչիւր էջ լեզուն է այնքան ճոխ պատկերներով ու մտածումներով, որ ընթերցողը կը շուարի, չի կրնար դանդաղիլ իւրաքանչիւր տողին վրայ եւ ինչեր ու ինչեր կը փախցնէ մէկ տողէն դէպի միւսը անցնելու ընթացքին:

Այո՛, «Ողբերգութեան Մատեան»ը երկու բեւեռներ ունի: Բանաստեղծին մեղաւորութիւնը: Եւ Աստուծոյ փառաւորութիւնը: Հակասական պատկերները՝ մարդուն ու Աստուծոյ: Մէկը պատկերութեան ու դատաւարտելի մեղաւորութեան խորհրդանշանը, միւսը մեծութեան ու անհուն ներողամտութեան փարոսը: Եւ մեղաւոր մարդուն այս երկարաշունչ խօսակցութիւնը Աստուծոյ հետ, մէկ նպատակ միայն պիտի հետապնդէ: Արժանանալ Աստուծոյ ողորմութեան: Սրբուիլ քահաւոր մեղքերէն: Թեթեւանալ: Մաքրամաքուր դառնալ: Եւ ասն զիրքին առաջին երեք տողերը՝ աշխարհաբարի վերածուած ձեւով.

Սրտիս դառնահեծ հառաչանքներու վայն ու ողբածայն աղաղակները Քեզի՛ կը վերընձայեմ, ո՛վ գաղտնատես:

Այս առաջին երեք տողերով արդէն բանաստեղծը կը մերկացնէ Աստուծոյ ամենաբարձր կարողութիւնը: «Գաղտնատես»: Աստուծոյ համար գաղտնիք չկայ: Ան ամէն ինչ կը տեսնէ: Ան կը կարգայ ինչ որ կայ մեր սրտի խորերուն մէջ: Տխմարութիւն է կարծել որ կրնանք բան մը գաղտնի պահել Աստուծէ: Չենք կրնար: Աստուած կը տեսնէ: Գաղտնատես է: Բայց չի խօսիր: Միայն կը սպասէ որ մենք խոստովանինք այն ինչ որ Ան արդէն կը տեսնէ: Որովհետեւ մեզի համար խոստովանիլ պիտի նշանակէ փաստել թէ մենք կը ճանչնանք մեր անձը: Պիտի նշանակէ՛ Աստուծոյ սեղանին վրայ դնել մեր մեղքերը: Եւ մաղթել՝ որ Աստուած ընդունի այդ խոստովանութիւնը:

Իմ այս կարեւոր ու սեղմ խօսքերուն հիւսուածքը ընդունէ՛ Բարեհաճօրէն, ո՛չ թէ բարկութեամբ:

Ցնցիչ է տեսնել թէ Նարեկացիին կը վախճայ որ Աստուած կրնայ նաեւ բարկանալ՝ լսելով մեր խոնարհ բանաստեղծին խոստովանութիւնները: Բանաստեղծը կը վախճայ, որովհետեւ շատ են իր մեղքերը, որովհետեւ այնքան մեղաւոր է ան որ Աստուծոյ համբերութիւնն իսկ թերեւս յորդած է այդ մեղաւորութեան դիմաց: «Ընդունէ՛ բարեհաճօրէն, այլ ո՛չ թէ բարկութեամբ»: Եւ Նարեկացիին այստեղ կու տայ անկեղծութեան ու բարեացակամութեան իր առաջին պատգամը.

Աստուած, որ չի կաշառուիր բանաստեղծութեամբ:

Որպէսզի որեւէ թիրիմացութեան տեղի չտրուի, բանաստեղծը ըրաւ արդէն անհրաժեշտ ճշդումը: Բանաստեղծական այս Մատեանը կը գրուի ո՛չ թէ որպէս կաշառք Աստուծոյ, այլ որպէս խոստովանութիւն՝ որ կ'արձակուի հաւատացեալ ու մեղաւոր մարդու սրտի խորերէն:

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

**ԱՆԱՐԱՏ ԶՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ Մ. ՇՈՒՀԱՆ ՄԱՆԿԱՍՍՈՒՐ**  
 Հեռ. (01) 449580 ԷՇՐԵՅԻԷ - ԺԵՀԹՈՒԻ



Մ. Շուշան մանկամտուրը կը սկսի Երկուշաբթի, 1 Սեպտեմբեր 2003 առաւօտեան ժամը 7:30ԷՄ մինչեւ 5:00 եւ կ'ընդունի նորեկ մանուկներ հինգ ամիսէն մինչեւ 4 տարեկան:

**ՅԱՏՈՒԿ ԴԻՐՈՒԹԻՒՆ ԱՃԻԱՏՈՂ ՄԱՅՐԵՐՈՒ**

Մանկամտուրը ունի յատուկ անձնակազմ, կարող հիւանդապահուիլ եւ պատասխանատուութիւնը յանձնուած է Մ. Շուշան մանկամտուրի քոյրերուն:

Մանրամասնութեանց համար դիմել Մ. Շուշան մանկամտուրի տնօրէնութեան:  
 Հեռաձայն՝ (01) 449580, Էշրեֆիէ:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

# ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ուղղագրական հարցին մէջ մենք աւանդապահ ենք, կողմնակից Մեսրոպեան ուղղագրութեան:

Առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու ըսենք, թէ հիմնական երկու պատճառ ունինք աւանդական ուղղագրութիւնը նախընտրելու. - ազգային եւ լեզուական: Այս երկու պատճառները սերտօրէն կապուած են արդէն իրարու:

Մեսրոպեան ուղղագրութիւնը 15 դարու անցեալ ունի, ընկերացած է մեզի պատմութեան բոլոր վերիվայրումներուն ընթացքին եւ, առաջին ձեռագիրներէն մինչեւ քսաներորդ դարու առաջին քսանամեակի ընթացքին տպուած գիրքերը, եղած են միասնական մեր կեցուածքին արտայայտութիւնը: Մէկ պատմութիւն եւ մէկ մշակույթ ունեցող հայը ունեցած է նաեւ մէկ ուղղագրութիւն: Դարերու ընթացքին փոքրիկ փոփոխութիւններ մտած են ուղղագրելու մեր սովորութիւններուն մէջ, բայց անոնք բնական հոլովոյթի մը բնական արդիւնքները եղած են ոչ հատում առաջացնելու որոշումի մը արդիւնքները: Լուրջ պատճառ մը չկար 15 դար գոհացուցիչ կերպով ծառայած ուղղագրութիւնը հիմնականօրէն փոխելու 1922ին: Լուրջ պատճառ մը չկայ նաեւ միասնականութեան շաղախ դառնալու կոչուած աւանդական ուղղագրութեան չվերադառնալու հիմա, անկախ գոյութեան եւ ազգակերտումի այս օրերուն:

Ուղղագրութիւնը խտացած պատմութիւնն է լեզուի բառերուն եւ անոնց կարծ հոլովոյթին: Անոր միջոցով է, որ կրնանք բարձրանալ մինչեւ բառին արիւրը, հասկնալ անոր նախնական գործածութիւնը եւ կրած իմաստային եւ այլ փոփոխութիւնները: Անոր միջոցով կը հասկնանք նաեւ քերականական օրէնքները: Արեւելահայերէն ուղղագրութիւնը կը խզէ այս կապը լեզուի անցեալին ու անոր բնական հոլովոյթին հետ, մանաւանդ ու տառացիօրէն անհասկնալի կը դարձնէ նորահանդերձ բառերը, կը խախտէ քերականական կանոնները: Լեզուն եւ անոր ուղղագրութիւնը կրնան հոլովոյթի ենթարկուիլ - ու մեր լեզուն եւ ուղղագրութիւնը ենթարկուած են հոլովոյթի - բայց հրամանագիրով չեն փոխուիր, պէտք չէ փոխուիլ:

Ներկայիս ուղղագրութիւնը կրնայ ազգային միասնութեան շաղախ դառնալ կրկին: Կը բաւէ վերադառնալ Մեսրոպեան ակունքին ի հարկին նկատի ունենալով փոքր փոփոխութիւններ, որ բնական հոլովոյթը չեն հակասեր: Այս վերադարձը պէտք չունի բիրտ ըլլալու Մակինցեանի հրամանագիրին պէս. պէտք է ուսումնասիրուած ըլլայ եւ հանգրուանային գործադրութիւն ունենայ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՅ**

«Բազին» 41  
 2, Գարուն - 2003

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵՅԷՔ «ԱԶԳԱԿ»ԻՆ**

Վճարելով «Ազգայն»ի փարեկան բաժանորդագինը, մեր ընթերցողները օրաթերթին հետ կը ստանան նաեւ

**ԱՂՂԱԿ**

շաբաթաթերթը, ամսական յանդիմանքով «Պոլիկ-Մոլիկ»ը, «Անահիտ»ը, «Նաւասարդ»ն ու «Ազգայն-ամսաթերթ»ը:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿՐՆԱՔ ՎՃԱՐԵԼ ԱՄՍԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՍՔ**

«ԱԶԳԱԿ» օրաթերթ, Շաղախյան կեդրոն  
 Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526  
 Fax : 01-258529  
 E-mail : aztag@inco.com.lb  
 website : www.aztagdaily.com

**www.aztagdaily.com**

**ԿՈՒՉՈՒԻՆ**

«ԱԶԳԱԿ»ի ՀԵՆՈՒՉԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 258526, 260115 եւ 241274: 01-259196:

# NURSING

## ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷԾԻ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ ասարտած ես միջնակարգի 9րդ դասարանը, դիմացդ կը բացուի NURSINGի ասպարէզը:

Լաւագոյն ասպարէզը, լաւագոյն վճարումով, անմիջական գործի ապահովումով:

Մեծ է պահանջը, քանի որ իւրաքանչիւր 16 բժիշկի՝ ՄԷԿ հիւանդապահուի:

ԾԱՆՕԹ.- Առաջին տարուան համար պիտի ընդունուին ասանանափակ թիւով աշակերտներ:

Արձանագրութիւն՝ ամէն օր:

**ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷԾ.- Տորա՝ հեռ. 01/251320**



# ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երևոյթներ

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ, ԹԷ ...

Լիբանանի ամառը յատկանշուած է իր իւրա- յատուկ բնութեամբ, ջերմ օդով, գիւղն ու ծովը վա- յելելու առաւելութեամբ, լեռնային շրջաններուն մէջ տիրող զով ու հաճելի մթնոլորտով, տուեալներ, որոնք անգամայն են մա- նաւանդ արարական եր- կիրներու անապատային շրջաններուն մէջ: Լիբա- նան կը հանդիսանայ այն երկիրը, որ իր վրայ կը հրաւիրէ արարական բո- լոր երկիրներուն քաղա- քացիներուն ու շահողու- թիւնը եւ զանոնք իր գիր- կը կը կանչէ:

